

Հովհաննէս Երան  
Ինկեղաւոր Եւրոպ

891.99

Σ - 85

8-36

# ՀԵԿԵԿԱՆԲՆԵՐ

Անգուստ հեկեկանքները խորա-  
խորհուրդ բնութեան ժպիտներն են  
կազմում, որ ընկնում են բեկ-բեկ  
չգիտիմ, որ ավուներներուն վրայ,  
լացկամած ու երազիտ...

— Լացը երգի մեկողիան է։—  
Մահեան պէս խոժոռ է իմ երազը...



1939

85

ՀԱՅԿԱՆ  
ՏՊԱԲԱՆԻԿԱՆ  
1914



891.99

19 NOV 2011

19 NOV 2011

2-85

ՈՍՏԱՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - ԴԿ

Արթուր Ե. Անտոնովիչ Մարտի

## ՀԵԿԵԿԱՆԲՆԵՐ

1007  
32516

Անգուսպ հեկեկանքները խորա-  
խորհուրդ բնութեան ժպիտներն են  
կազմում, որ ընկնում են բեկ-բեկ  
չգիտեմ, որ ափուներներուն վրայ,  
լացկամած ու երազոտ...

— Լացը երգի մեկուկեան է:—  
Մահեան պէս խոժոռ է իմ երազը...



\* \*

Հպարտ ու մենակ կուռումն անողորմ,  
Այսօր վճռական իմ սուրն է ձօձում.  
Քայլածքս հաստատ, հայացքս հեղնոտ,  
Հսկայի նման առաջ եմ նետում...

Անվերջ է ուղիս. անվերջ ընդարձակ,  
Տիեզերքն իմ շունչն է կազմում հիմա...  
Միևնոյն է. ինձ ծաղր ու քամահրանք,  
Ես արհամարհում եմ ամենքին հիմա...

Տիեզերքն իմ շունչ, սրտումս հեկեկանք,  
Մահւան պէս խոժոռ է իմ երազը...  
Չեմ նայում երբէք տապ ու տառապանք,  
Սրտումս երգ կայ... — շուրջս կռիւ կայ...





Կարեկցոտ աղօթքով, խունկ ու  
մոմ կվառեմ.  
Դու ինձ հետ լուսաշող երկարիր, իմ  
ջերմ յոյս.  
—Այս տաճարն իմ սիրան է— աւերակ  
ու անբեմ,  
Ու մութը իմ Աստուած— երկունքոտ  
մտքերուս...

Դոռ պայքար ու կոխ կսկսեմ  
կեանքի դէմ,  
Դու աղօտ ու ջերմոտ պլպլայ...  
Դու տուր լոյս...  
—Մի նոր կեանք, նոր Աստուած  
կստեղծեմ պայքարէն,  
Նոր ապրում արևոտ, նոր առտու—  
արշալոյս...



Չգիտեմ ինչո՞ւ, յանկարծ ջերմ սիրոյ  
կարօտ եմ զգում...  
Եւ՝ սիրտս տխուր ամեն երեկոյ  
Սէր է աղմկում...  
Չգիտեմ ինչո՞ւ, ու զում եմ խաւար  
Ծանր տեսիլով  
Նստի չոր կրծքիս, և երկնի պայծառ  
Արևն անվրդով,  
Ինչպէս յուշ, մշուշ, գունատի մթնի...  
Ու սիրտս երկու  
Մասի բաժանւած, յաւերժ թափառի...  
Չգիտեմ ինչո՞ւ...  
Չգիտեմ ինչո՞ւ...





\* \*  
\* \*

Գիշեր եմ ուզում. մութ խաւար գիշեր,  
Եւ քար լռութիւն.  
Որից սէր փնտռեն մտքիս թռիչքներ  
Անուշ երազուն...  
Սէր, որի հարւածից հեծում են լարեր  
Այրւող սրտերի,  
Եւ խուլ մրմունջով պատմում կսկիծներ  
Թագուն տանջւողի...  
Գիշեր եմ ուզում. գաղտնապահ գիշեր  
Թափած արցունքի,  
Սիրոյ հարւածից գոյացած վէրքեր  
Ոչ ոք չտեսնի...  
Եւ թախիծների հսկայ զսնգւած  
Իր առեղծւածով,  
Մարի սև խաւար բնութիւն գրկած  
Դատարկ յոյսերով...  
Գիշեր եմ ուզում, սև մռայլ գիշեր  
Յուզիչ ու խոհուն.  
Դարդի ու ցաւի սփոփիչ հովեր  
Արնոտ վէրքերուն...

Օ Ր Օ Ր

Քնիր իմ բալայ, քնիր երազուն  
Կեանքի գիշերին ես անքուն մնացի.  
Քնիր, երազիւր նոր կեանք թարմութիւն,  
Որին ես երբէք չի երազեցի...  
Ինչո՞ւ ես լալիս: —  
Քնիր և մի լայ, իմ ազիզ անուշ.  
Աշխարհն է լալիս իր դառն ցաւի մէջ.  
Եւ կեանք թախծալից որպէս մի մշուշ,  
Կորչում է լացող արցունքների մէջ...  
Դէհ, քնիր, բալիկս:  
Անյայտ ապագան մռայլ անորոշ  
Մեր տարտամ կեանքին քու սրտում դիզւեց.  
Եւ քեզ պէս յոյսեր դեռ մանուկ, քնքուշ,  
Էդ ծանր բեռին շուտ կոնակ տւեց...  
Էլ ի՞նչ ես լալիս: —  
Քնիր, շուտ զարթնիր աշխարհի ձայնից,  
Դէհ, քնիր, բալիկս...





Տարին մէկ անգամ կարօտս առնելու,  
Քեզ մօտ եմ գալիս, իմ ազիզ մէջ ջան.  
էս օր էլ ահա ճամբայ ընկնելու  
Միտքը պաշարեց, իմ սիրտն անզիւման:

Դէհ տես, իմ մէրիկ, սարերը անցայ  
Ահ ու սարսափը իմ սրտին տիրած.  
Թէն դուշմանից էս անգամ պրծայ  
Յոյսի լապտերը սրտումս չմարա՛յ,  
Բայց լսիր, մէրիկ, իմ անբախտ մէրիկ,

Միակ փափագս էր քո մօտը լինել...

Ու ես ինչ անեմ. խօսքերս մէկիկ  
Մոկաց հեծեծող գետին եմ յանձնել...

Գնա, ահանջ դիր իր հեկեկոցին.  
Քեզ կասի շատ բան, դու իմ անբախտ մայր...  
Գիտցիր թէ ինչպէս ինձ հետևեցին  
Կատղած քիւրդերը անյազ անգագար...

Ու երկար յոգնած սարէր կտրելով,  
Ես կարօտս չառի կէս ճամբին կանգնած...  
Գիշերներ անքուն, ցորեկ երազով  
Աչքերս, հայրենիք, քեզ եմ ուղղած...

—Ուրեմն իմ մէջ ջան, երբ դադրած կուից  
Քաջ հերոսներին դու հաց կտանես,  
Նրանց քրտնաթոր տաք ճակատներից,  
Երկար, շատ երկար իմ կարօտս առնես...

\*\*\*

Վէր իմ սրտին մէրիկ ջան,  
Քարիմ կտոր է նստեր,  
էն քարի տակ անզիւման  
Սրտիս ճրագն է մարեր...

Ա՛խ, նանի ջան, ի՞նչ անի  
Ծով ցաւին մէջ քու տղէն,  
Քօլ արնի մէջ ի՞նչ անի,  
Մենակ, օտար քու բալէն...





Իմ հոգում աղմկոտ մեծ գիշերն է պատել,  
Ինձ մօտիկ հարազատ էլ ոչ ոք չեմ տեսնի.  
— Հեռում փոթորկոտ բարձունքներն

են անել

Ինձ համար և կեանք և արև կմեռնի...

. . . . .

Վառ գողտրիկ աստղերը կմալեն իմ  
հոգում...

Պայքար է անվերջ... պայքարը նիթի...

— Ինձ համար աշխարհն է մեռնում,

Աշխարհը պայքարոտ կարիքի ու կրքի...



Յաւը սրտիս սէր երգերով  
Կթռթռայ իմ հոգին,  
Անըջացած կարօտներով  
Վեր կճախրէ իմ հոգին:

Լոյսիմը փայլ—աստղիմ կտոր,  
Եթերին մէջ կժպտայ,  
— Լոյս մը անփայլ—քարիմ կտոր  
Սրտիս սեմին կը կենայ...

Յաւը սրտիս, ցաւ երգերով,  
Յաւ կհեծէ իմ հոգին.  
— Սիրտս քարացած, սէրս վիրաւոր,  
Քուն կմանէ իմ հոգին...





\* \*  
\*

Տատամսոտ քաղերով երբ եկար  
Խրիկնամուտին շողերով շղարչւած,  
Տժգոյն ու տխուր ժպիտ մը խաղար  
Այդ ցամքած այտերէն քու շիկնած:

Վերջալոյս գեղեցիկ իր փէշերը ժողւէր  
Պարտէզիս ամառայ ծառերէն,  
Սոխակ մը մենակ, ալ անվարդ, գեղգեղէր  
Շողշողուն նուռերի թուփերէն...

Ու համբոյր շրթունքիդ վարանոտ  
գիշերւան  
Արցկեցիք հիւսկէներդ երերուն  
նազանքով մը հովին:  
—Սիրտ բացիր, սէր տածիր, այս  
մեռնող իրիկւան,  
Թո՛ղ խնդա, թո՛ղ թնդա, ի՞մ անգին  
քու հոգին...



\* \*  
\*

Ա՛խ, տէք ինձ ջարդւած սագս  
Սաղն ու լարը նորոգեմ,  
Սրտումս մեռած սէրն ու ժպիտ  
Գէթ մի անգամ էլ երգեմ...

Սաղն ու սիրտս, սիրտս ու սագս  
Գարնան մեռնող վարդին մէջ,  
Թող Էրազուն գգւէ հոգիս,  
Թափւող, մեռնող վարդին մէջ...

Սաղը սրտիս, սիրտս սագիս,  
Թախծոտ, մաղձոտ, հեծկլտան,  
Խենթ ու խելառ ապրումներս  
Վարդերի հետ թող գնան...  
\* \* \* \* \* թող գնան...





ԸՆԿԵՐԻՍ

Ես միայնակ... Ախ, ընկեր ջան,  
Ընկերացիք իմ ցաւին.  
Մեն ու մենակ լուռ գիշերւայ  
Ծոցում փնտռենք մեր ուղին...

Այնտեղ խաւար, մի արշալոյս  
Մեզ նոր աշխարհ բաց կանի.  
Կեանքի ցաւոտ երգերից դուրս  
Կեանքի համերգ կողջունի...



Լ Ծ Ա Կ

Լճակ իմ անուշ, հայացքս օտար  
Հայլոյդ երեսին ուզում եմ սառի...  
Եւ թող սիգաճեմ սրտներ սիրահար  
Զոյգւին ու ժպտին,  
Ափերիդ վրայ հայացքիս օտար...  
Ու վերջալոյսի շողերը գեղին  
Բլբուլի ախուր հնչունների հետ,  
Եւ անտառի վեհ շուգերը մթին  
Թող ոսկեզօծեն ու հանգչեն քու հետ —  
Ու երբ տխրադէմ կոյսը աչագեղ,  
Նստէ ափերիդ հմայած քեզմով,  
Եւ սիրոյ ժպտ... և վերյիշումներ  
Խառնէ ջրերիդ նոր նոր յոյզերով,  
Ես էլ մի ըռպէ հայացքովս օտար  
Թող, որ արբենամ ու նայեմ երկար...  
Ջրերիդ վրայ, ջրերիդ տեսքով...





Երբ խաւարը ծալ առ ծալ  
Սենեակիս խոր կղիզի,  
Եւ երբ լուսինն էլ իսպառ  
Դժգոյն կերպով կանյետի,—

Փռիւ մազեր քու երկար  
Մերկ իրանիդ հոլանի,  
Ինչպէս երազ այս գիշեր,  
Արի քունս խանգարի:—

Ու երբ յուշեր հե ի հե  
Մեր մութ կողքին պար բռնեն,  
Եւ երազները անձև  
Սրտիս վրայ հեծեծեն,—

Դու քո երգը դիւթական  
Քոյրիկ, մեղմիկ շարադրիր,  
Այդ աչերով մոգական  
Որպէս երազ ինձ խաբիր...



Գարուն եկաւ: Գարուն գնաց...  
Էլ չեմ սիրում ես ծաղիկ. .  
Իմ ապրումներ անվերադարձ,  
Ուր գնացիք անյուշիկ...

325/6

Լոյս գիշերին մեռնող զարնան  
Դուրս եմ եկել պարտիզում,  
Սիրտս չունի էլ առաջւան  
Սիրոյ խանդը ու աւիւն...

Եւ միայնակ, և ընկճւած  
Խորհում եմ ես ու խոկում,  
—Ա՛խ, անցեալի օրեր սեցած  
Ոչինչ, ոչինչ չեմ յիշում...






\* \*  
\*

Վերջալոյսին անուրջներով  
Սիւքի մը պէս դու անցիր,  
Քոյրիկ, մեղմիկ արցունքներով,  
Սիրտս, սիրտս աղմկիր...

Հոն փրփրի դէզ մը ծփուն  
— Սէր ու երգեր, երազներ,  
Յուզւին հիւծւին տենչով մ'անհուն,  
Անհուն ոսկի կարօտներ...

Քեզ խնկաբոյր ծաղկանց հոտով  
Կը կերակրեմ ամենուրէք.  
— Ինքս աղքատ եմ... բայց վեհ սրտով —  
Սիրտս լիքն է սէր ու վերք...

Իրիկունին հով թռերով  
Փէրիիմ պէս քօղակիր,  
Վառ երազով, վարդ երազով  
Սրտիս խորանը իջիր...



Յ Ն Ո Ր Բ Ի Ն

Գիշեր,  
Յուշեր,  
Սէրս տարաք,  
Սիրտս անկրակ  
Կհեռայ,

Յոյսոտ,  
Յոյզոտ  
Եարս մթում  
Կսկիծ սրտում  
Կհեծկտայ:

Գիշեր,  
Յուշեր,  
Սէրս տւէք,  
Անձէն մարէք  
Իմ հոգում,—

Դարդոտ  
Եարոտ,  
Եարս կուլայ,  
Ա՛խ, կսգայ  
Երազում...





Դուրսը մոռայլ, դուրսը անձրե,  
Թխպոտ երկինք կորոտայ.  
Երգերս դողդոջ, երգերս անձե,  
Այս, հէգ սիրտս կսգայ...

Հագար ափսոս էն անցորդին  
Որ չսիրեց ու գնաց...  
Վարդին թերթեր էլ գոյն չունին,  
էլ վարդ ու սէր չմնաց...

Դուրսը մոռայլ, դուրսը անձրե,  
Ծաղկունք ամեն սուգ հագան.  
—Սրտիս իշաւ աշնան արե,  
Սէր ու երգեր էլ չկան:



Դու ասացիր ինձ, որ պիտի ժպտաս  
Մի օր, լուսաշող գարնան պէս զւարթ.  
Եւ, ասացիր ինձ, որ կաս պիտի գաս,  
Գարնան պէս զւարթ, գարնան պէս զւարթ:—

Հոգումս իջել է ցուրտ, լալկան աշուն.  
Երգերս վհատ... պաղ, միապաղաղ  
Շուրջս լուսթիւն, շուրջս պալկութիւն...  
—Տերկներ դժգոյն թափում են խաղաղ...

—Թւում է, որ դու երբէք չես գալու.  
Չգիտեմ կգաս... չգիտեմ դու կաս...  
—Եւ թւում է ինձ երազի նման,  
Իմ երազ ընկեր և կաս, և չկաս...







Ռնամայ երկինք էր. լուսնկայ գիշեր...  
 Սիրոյ պէս քաղցր, յուշերի նման...  
 —Վառուդ սրտերի, այն մի կարօտ էր.  
 Առաւելի փիին... անխօս ու անձայն...

Կիսաբաց վարդեր, հով ու գով շոյանք,  
 Եւ շուգ ու ստուեր, լուսեղէն շարան...  
 Մեր շուրջ լռութիւն... հմայող թովչանք,  
 Համբոյրներ էին, երազի նման...

—Ընկան, լուռ հանգան, դողդոջ վարանոտ  
 Ծւ սէր և համբոյր—լուսնկայ գիշեր...  
 Զգիտեմ հիմա զգւանք ու կարօտ...  
 Հիմա մութ գիշեր, մոռյալ պատկերներ...



Յոգնած կանգ կառնեմ ես այստեղ ահա...  
 —Ոսկի յոյսերի երազ փերին.  
 Կթողնեմ, անյոյս պարտաւածի նման,  
 Կնճռոտ ու փշոտ իմ մշուշ ուղին...

Թէպէտ և գիտեմ, քաղցր է իմ տանջանք  
 Ծիւրող դառնութեան ժամերից յետոյ,  
 Որ իմ ճամբէքի այդ փուշ ու տատասկ  
 Վիճակի մի օր վարդի և սիրոյ,—

Բայց պէտք է հաշուեմ կեանքի  
 Կուխն հետեւ  
 —Ես լուռ կտանեմ իմ դառն վրճակ...  
 Դիտեմ, որ յոյսերս չեն լինում անյետ,  
 Որ դարձեալ վերջը իմն է յաղթանակ...






Կանչում է կրկին ինձ մի ձայն հեռու,  
— Հեռուն անհատնում լուսկամար ուղի.  
Ուզում եմ նորից դուրս գալ կուեղու,  
Թէկուզ թէ կընկնեմ այն ձայնին գերի...  
. . . . .

Գնում եմ անվերջ... Ճամբէքս դժւար.  
Սաստում է քամին, ձիւն ու փոթորիկ,  
Բայց ես գնում եմ ինչպէս խելագար,  
Յոյսով հասնելու այն ձայնին մեղմիկ...

Գնում եմ անվերջ... Յուրա ձմրան գիշեր...  
Մեռնում է ժպիտ թափւող ձիւնի տակ.  
Բայց իմ սրտում կայ վառ դարնան արև,  
Սրտումս կայ սէր, կրակ ու տենչանք...



Աշնան գիշեր, զով գիշեր,  
Յոլուն անուշ լուսընկան,—  
Երգ, երազանք ու խոհեր  
Այն, ինչ անուշ կտեղան...

Ինչքան քնքուշ է կոյսին  
Կախարդական սև աչեր...  
Թովչանք, գգւանք անմեկին  
Եւ սիրաջերմ կարօտներ ..  
. . . . .

— Չքնաղ կոյսի զով գիշեր,  
Սիրոյ երկինք հեշտագին,  
Տւէք համբոյյ. թռչիմ վեր...  
— Ժպիտն անուշ է կոյսին...





Աչերդ յառիւր երկինքը սէրի,  
Անտես դու անցիր իմ հոգն ու կարիք.  
— Թող քու երազը միշտ պայծառ լինի  
Իմ անսուշ քոյրիկ, իմ քնքոյշ քոյրիկ...

Ասողերի փայլով, ծաղկանց բուրմունքով  
Ապրիր, ժպտադէմ խաղաղ գիշերներ.  
Ես քեզ կօրօրեմ իմ վեհ երգերով,  
Ես քեզ կը կարդամ իմ ջերմ աղօթքներ...

Քեզ համար զարուն միշտ կմնայ վառ  
Եւ կեանք քաղցրաբոյր կլինի ընդմիշտ.  
Կապրես երազուն, հանգիստ ու խաղաղ,  
— Միայն չտեսնես իմ թախիծն ու վիշտ...

Աչերդ յառիւր երկինքը սէրի,  
Անտես դու անցիր իմ վիշտն ու կարիք.  
— Թող քո երազը միշտ պայծառ լինի,  
Իմ անսուշ քոյրիկ, իմ քնքուշ քոյրիկ...

ԻՄ ՎԱՀԱԹԱՌԱՄ ԸՆԿԵՐ

† ՏՐԴԱՏ ՍԷՄԷՐՋԵԱՆԻՆ

Ես ընկած էի մայր գիշերւայ գիրկ.  
Շոյում էր ինձ քունն հանգիստ ու խաղաղ.—  
Երազում տեսայ հեռու... բայց մօտիկ  
Տանում են մի սիրտ, սեռածակ դադաղ...

Մարդիկ յամրաքայլ, սե, խոժոռ դէմքով  
Պնում են տխուր... և մեռնողի մայր...  
...Այն ի՞նչ պատկեր է սե երիզներով...  
Ո՞վքեր են տանում նրան համրաքալ...

Ո՛հ, ժպիտ ունեն, մահւան պէս խոժոռ...  
Այլայլոււմ եմ ես... այս ինչ է երա՞զ...  
Ծանօթ ընկերներ, շւար ու մոլոր  
Թաղում են մի սիրտ... մի ծանօթ դադաղ...

. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .



Վերևում դժկամ երկինքը անասող.—  
Յաճը հեւացող իմ սիրտը անտես...  
—Իմ անգին ընկեր միթէ էլ չկաս...  
Միթէ, էլ երբէք չպիտի ապրես...

—Ծաղիկ կը քաղեմ այս ափունքներից,  
Կթրջեմ ցօղով ու կմնայ թարմ.  
Ես փունջ կը կապեմ վշտից, տանջանքից  
Իմ մեռնող ընկեր, երբ քեզ մօտ կը գամ...

Կը դրկեմ շիրիմդ ախպէս կարօտով.  
Ու ծաղիկներս քեզ շունչ կգառնան,  
Եւ դու կարթննաս իմ վեհ երգերով  
Կապրես միշտ յաւէրժ, իմ վաղաթառամ...



Ընկած եմ չիմաց...

Տանջանքով ծնած, տանջանքով մեծցած,  
Տանջանք եմ հիմայ...  
Ամեն դուռ բախխած, ամեն տեղ մերժւած  
Ընկած եմ ահա...  
Ընկած եմ անգօր, կորած ու մոլոր  
Մեծ ճամբին ժահրոտ...  
Զայրոյթի արցունք, յաղթւածի հառաչ  
Իմ սրտում թունոտ...  
Ընկած եմ հիմայ...





Է՛՛ ԳԱՐՈՒՆ ԶԸ ԿԱՅ...

Չգիտեմ, արդեօք է՛լ գարուն կը գա՞յ,  
Է՛լ վարդ կբացա՞ն, նորից երեկեան...  
Արդեօք եղե՞լ են, ինչ որ չեն՝ հիմայ.—  
—Շուրջս, սրտումս մշուշ է միայն...

Տեսե՛լ եմ արդեօք ես երբեք գարուն...  
—Բախտը ինձ երբեք արդեօք պիտ ժպտա՞յ...  
—Շուրջս սրտումս մաղում է աշուն,  
Չգիտեմ կը գա՞յ... արդեօք գարուն կա՞յ...



ԱՍՈՒՄ ԵՍ...

Ասում ես անշնչա՛տ կբացա՞ն մի օր  
Գարնան մանիշակ, և սիրտս կրակ  
Տենչանք կունենայ, վերստին ձգտող,  
Վերստին ձգտող, կրակ ու տենչանք...

Ասում ես... ոչինչ, թողնեմ ամեն ինչ...  
Թողնեմ ու ընկնեմ քու ծով սրտում ջինջ...  
Ասում ես... մոռնամ... չտանջեմ չլամ.  
—Ինչպէս ուզում է թող կեանքը գնայ...  
...Ասում ես...





ՊԱՆԴՈՒԽՍ ԵՄ ԲՈՅՐԻԿ

Պանդուխտ եմ քոյրիկ, անընկեր եկայ...  
Կռուռմ յօշոտւած սրտումս վերք կայ.—  
Մարդկանցից զզւած, կեանքից հեռացած,  
Պանդուխտ եմ քոյրիկ, խաբւած, մոլորւած...

Պանդուխտ եմ քոյրիկ, օտար ու անճար...  
Օտար ես և՛ դու, և՛ ես, քեզ համար.  
—Ա՛խ, սիրտս եարոտ, մենակ ու օտար,  
Ընկել եմ անօդ, անծանօթ աշխարհ...

Աշխարհն անծանօթ... աշխարհն էլ օտար  
Եւ քոյր իմ ամեն, միայն ինձ համար...  
...Մի հարցնիլ անցեալս... ոչինչ չգիտեմ,  
Ներկայիս նայիր, մի խեղճ մզնորդ եմ...  
• • • • •

Ես թողի նրանց... ես մենակ եկայ...  
Պաւիցն անողոք սրտումս վերք կայ...  
—Մարդկանցից զզւած, կեանքից հեռացած,  
Պանդուխտ եմ քոյրիկ, խաբւած, մոլորւած..



ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

---

Ցանկացողները թող գիմեն՝

Эривань, բոլոր գրավաճառներին, կամ  
հեղինակին՝ Файла-Базарская улица, № 9.

---

ՀՀ Ազգային գրադարան



NL0336400



39667